ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀՏԿԵՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Արտաշատի ջրանցքի մաքրման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 12 փետրվարի 2020թ.
ժամը. 10:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Մ. Առաքելյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Գ. Խոսրովյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնատման մասին

(Մ. Առաքելյան)

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգով Արտաշատի ջրանցքի մաքրման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2020 թվականի փետրվարի 12-ին, ժամը 10:00-ին:

Գնումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց Արտաշատի ջրանցքի նորոգման աշխատանքների գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Ջրանցքների մաքրման աշխատանքներ	20424600 (քսան միլիոն չորս հարյուր քսանչորս հազար վեց հարյուր)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	«Արհովշին» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Մասնակիցները www.armeps.am www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«Արհովշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.4 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Չ.հ	Չաբաբաժնի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	Ջրանցքների մաքրման աշխատանքներ	23738460 (քսաներեք միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր վաթսուն)	28486152 (քսանութ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար հարյուր հիսուներկու)

1.5 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց մասնակցի փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում «Արհովշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ընդգրկված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Գնահատող հանձնաժողով որոշեց՝ «Արհովշին» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.6 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ մասնակցի առաջարկած գինը գերազանցում է տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրավերի 8.7 կետը գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել և մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.7 «ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ՀՄԱՇՁԲ-20/1» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակիցներին բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մ. Առաքելյան

Անդամներ՝ _____ Ս. Մելքոնյան

_____ Գ. Խոսրովյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան